

այս խոտիս՝ Սահճ ԸԼ-Հիմար (Իշու թոյն) կ'ասեն, եւ պարսկերէն խար շահր- կ'ասեն: Տես եւ ճիւղի թ. 1915:

ՄԻԷ. 3330. "Խերդու-է = Փոքր Ղաղուէն է, ըստ Ամիրտովլաթայ, որ եւ կը կոչէ զայն Հ-Լ, ՀԷԼ:"

= Ղաղու-է՛ է պրս. "Գադու-է [զղ. Cardamome]. է գեղ ինչ, որ ունի երկու տեսակս. մինն մեծ, եւ միւսն փոքր. եւ ի նոցունց մեծն Հ-Լ ասի, եւ միւսն ՀԷԼ" (Գէորգ). որով զանազանի են Ամիրտովլաթայն Հ-Լ (մեծն) եւ ՀԷԼ (փոքրն): Կը գրէ դարձեալ Գէորգ. "Հէյլ, Մանր համեմ ինչ. որ եւ ասի ՀԷԼ. տես եւ ի թ. 1685 Հայք-ասիի, ՀԷԼ, ՀԷԼ Նմանապէս եւ Խերդու-է՛ է պրս. "Խէյրդու-յա՝ Համեմ ինչ (Գէորգ), զոր Ամիրտովլաթ կը նոյնացնէ ընդ ՀԷԼ (Հէյլ, ՀԷԼ), եւ Փ.քր Ղաղուէն է, կ'ըսէ. այս ինքն գղ. Petit Cardamome, ինչպէս նշանակած է եւ Հ. Ալիշան, լատ. Cardamouum minus: Այս Խերդու-է (Խէյրդու-յա) է որ կը գրուի յԱշխարհագրութեան Խորենացւոյ Հրէո-ւնի (տպ. 1865, երես 615. իսկ տպ. 1881, երես 44, Ախիւնի-նի), անտես մնացեալ ի Հ. Ալիշանէ. "Ինի անդ [ի Հնդկիս]. Հալուէ, Փաղսնդամուշկ. Քափուր, Ճանդան, Նայիրուակ, Հրէո-ւնի: Կոյ եւ ի թրգմ Գ զոց. ՀԷԼ, Խորասկ կակուշա. Խորո-ւնի է պրս. Խի-րո, Մանր, զոր տես եւ ի Համարն ճԺԶ, "Խորո-ւնի Ծոթրորուն:"

Ծանօթութիւն.

1. Այս թուի Հ. Ալիշանի բաժնն ի թ. 1359. "Պրս. Խորո, որ է լատ. Cardamomum, եւ յատկապէս մանր տեսակն": Տես եւ ի թ. 1931, Մ-Լ-ի:

ՄԻԸ. 1135. Խորդու-է?

= Տես զստուգարանութիւնն ի համարն ճԳԶ:

ՄԻԹ. 1401. "Կիլի, ըստ կամարկապեցոյն՝ Գղթոր է, եւ այլն:

= կամարկապեցին առած է զայդ ի բառից Գաղիանոսի. "Կիլի, Գղթոր, Գաղ. Ա եւ Գ. որ է յն. Κηχίς, գղ. Noix de galle:

ՄԼ. 1404. "Կինամոն, Կինամոն, եւ այլն:

= Սխալ է ըսելն թէ "Խորենացի ոչխար-հագիլն յիշած է զԿինամոնն կամ Կինամոնն Տմորեաց, Հ. Ալիշան թուի թէ ուզած է գրել Միլի-որ Գոլ: — Նոյնպէս սխալ է ըսելն թէ "Յովսեփոս (Հնախօս. Բ, Բ), յիշած է զԿինամոնն Տմորեաց ի Քարոն? Կորգուաց, ուր է եւ Տմորիք գաւառն": Յովսեփոս, Հն-իօս, Գիբբ Ի

[եւ ոչ: Բ], գղ. Բ, հատած Գ. (Flavii Josephi Opera graece et latine, տպ. G. Dindorfius, Պարիս 1865, Հ. Ա, երես 770), կը յիշէ զAmomum եւ ոչ զԿինամոնն. իսկ գաւառն՝ զոր Յովսեփոս կը կոչէ Κάροων՝ ոչ է "Քարոն? Կորգուաց, ուր է եւ Տմորիք, այլ խորան՝ քաղաք Միջագետաց, ինչպէս կ'ըսէ եւ մերս Խորենացի, Բ, լե. Սապէս եւ զգլուխ կանանցն Արգարու, որում անուն էր Հեղինէ, առաքեաց յԻրային քաղաքն բնակել ի խորան:"

ՍԼԱ. 1579. Հողմարար:

= Թուի Անիսոն, գղ. Anis. զորմէ կ'ըսէ Ամիրտովլաթ (թ. 109. Հայք-ասիի). "Ինքն հունտ է անուշահոտ, եւ թուրքն Հողմարար ասէ:"

(Հորեն-ի-է)



ՆՈՐ ՄԱՅԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

ՔՐԻՍՏԵՓՈՐ ԿԸՐԱ-ՄՈՒՐԶԱ

(ԿԸՐԱ ԿԵԼԱՆՔԸ ԵՒ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ)

(Հորեն-ի-է)

III.

Երկեր եւ յօդուածներ:

Քրիստ. Կարա-Մուրզան մեծ չէ նրա համար, որ նա հայ ժողովրդական եւ հողեւոր երգերը զրի առաւ ու դաշնաւորեց. երաժիշտը մեր երաժշտական պատմութեանը մէջ իր արժանի եւ բացառիկ տեղը ունի նրա համար, որ նա հայ ժողովրդական երգը տարածեց, եկեղեցական երաժշտութեանը զարկ տուեց եւ վերջապէս բազմաձայն երգեցողութիւն մտցրեց: Հանգուցեալի գործերի մեծ մասը մնացել են մինչեւ այսօր էլ անտիպ. շատ քիչ երգեր կան հրատարակուած, որոնք սակայն գեղարու եստական խորութիւն եւ արժէք չունին: Պարզ է դրա

պատճառը: Եւ հնարաւ որու թիւն չունեցաւ երաժշտական բազմակողմանի կրթութիւն ստանալու եւ հէնց այս միակ պատճառով էլ Կարա-Մուրզային չյաջողուց երաժշտական խոշոր եւ մնայուն գործեր արտադրել: Երա թէ ինքնուրոյն գործերը եւ թէ դաշնաւորութենքը չունին հայկական երաժշտութեան զրօշմը: Արեւելեան զանազան մօտիւններ ուժեղ կիրպով իշխում են նրա իւրաքանչիւր գործի մէջ: Այսպիսով ուրիմն նրա աշխատութիւնները երկու ասակէտից անարժէք են. նախ որ գեղարուեստական խորութիւն չունին, երկրորդ որ հայկական հարազատ մօտիւններ չեն: Եւ բազմամթիւ գործերից արժէ յիշատակել հետեւեալները՝ «Շուշան» (օպերա), «Հրդեհ», «Գաղթականներ», «Հովուհի», «Ով ստեղծող», «Բաքէ», «Հնչեցին լարք», «Ով տէր Աստուած», «Ով վստեցիր ի զգօն հոգի», «Ղաւտն Աստուած» (Թատրոս), «Հայերս ինչ անենք»:

Երա երաժշտական ամբողջ աշխատանքները, կարելի է ասանց չափազանցութեան ասել, որ ռազմաշունչ բնաւորութիւն ունին Կարա-Մուրզայի բնորոժ խօսքերի եւ եղանակների միջեւ անբաժանելի կապ կայ. այս պարագան խոշոր առաւելութիւն է տալիս իւրաքանչիւր երաժշտի: Եւ շատ լաւ բնութիւն էր որ երաժշտութիւնը առաւելագոյն մեծ առնչութիւն ունի բանաստեղծութեան հետ: Եւ Կարա-Մուրզան այդ ուղիղ ճանապարհի վրայ սայթաքում այդ չէ արել երբեք: Անշուշտ, չէ կարելի մեղադրել երաժշտին, որ նա ուրիշ մօտիւններ շատ չէ մշակել: Այս երեւոյթը ունի իր խոր եւ հիմնական պատճառը: Ժամանակաշրջանը արգարացնում է նրան: Պատմական սխալ կը լինէր, եթէ մենք փորձէինք Կարա-Մուրզային մեղադրել աթոռի վրայ նստեցնել: Եանցանքի խնդիր չէ կարող առաջ գալ, քանի որ նա շարժուել է իր ժամանակաշրջանի պահանջների համաձայն: Ամէն սերունդ իր հոգեկան եւ մտաւոր ար-

ռանձին պահանջները ունի: Կարա-Մուրզան եղաւ առաւելագոյն իր սերնդի եւ ժամանակաշրջանի հարազատ ներկայացուցիչը:

Կարա-Մուրզան իր ռազմաշունչ, հայրենասէր մօտիւններով ժողովրդականութիւն էր վայելում այն ժամանակ, երբ մեր զրական կեանքը նոր փուլի մէջ էր մտել եւ զարգանում էր զարմանալիօրէն արագ թափով: Այդ այն ժամանակ էր, երբ հայ զրական ասպարէզում Ռաֆֆին եւ Պատկանեանը — նախակարապետները հայ յիշատիւնութեան — իրենց հրաշունչ խօսքերով նոր սերունդ էին դաստաւարակում: Մըր զրական հրապարակի վրայ նրանք ցնորդ էին եւ տիրապետող: Երրազով ժողովրդականութիւնը նրանց էր կարգում եւ այդ զրականութեամբ հասակ քաշում: Այդպէս էր այդ ժամանակուայ մեր զրական կեանքը. երաժշտութիւնը չէր կարող բացառութիւն համարուիլ նա չէր կարող ուրիշ, ամբողջագոյն հակառակ ճանապարհի ընթանալ: Եւ չէմ ուզում այստեղ այն հարցը յարուցանել, որ մեզանում զրականութիւն թէ երաժշտութիւնը աւելի բախտաւոր է եղիւ. բայց եւս պիտի վճռականօրէն ասեմ որ նրանց մէջ եղիւ է եւ կայ ներքին հոգեբանական սերտ միութիւն: Կարա-Մուրզան հասկացաւ այդ եւ գնաց այդ ուղիղ եւ ճշմարիտ ճանապարհից:

Եթէ փորձելու լենք այդ շրջանի հայ երաժիշտների գործերը անպիղծ ենթարկել, նրանց մօտենալ տիկնիկագոյն, պիտի տեսնենք որ բոլորն էլ նոյն ճանապարհից են գնացել: Որոշ չափով բացառութիւն պէտք է համարել Եկմանեանը, որ իր ամբողջ ժամանակը յատկացրած է եղիւ պատարագը դաշնաւորելով:

Սակայն որքան էլ Կարա-Մուրզայի գործերը այսօր գեղարուեստական արժէք չեն ներկայացնում, յամենայն դէպս, այդ ժամանակ, նրանք արժէքաւոր էին, նորոյթ եւ հետաքրքիր: Երրոյթ նրա համար, որ անխոնջ երաժիշտը տաղտկալի եւ միաձայն

երգերը բազմաձայնի էր վերածել: Երա բուրբ երգերն էլ — չնայած իրենց գեղարուեստական թերու թիւններին — ցնցող տպաւորութիւն են թողել հասարակութեան վրայ: Այդ եղանակների ազդեցութեանը տակ ժողովուրդը լացիլ է. ծիծաղել եւ ոգեւորուել: Երբ մի կողմից Եալքանդեան, Արծրունին իրենց բոցաշունչ խօսքերով հրապարակ էին աղվում եւ յեղափոխական սերմեր ցանում, միւս կողմից էլ, Կարա-Մուրզան իր դաշնաւորած երգերով աւելի էր հրահրում եւ ազդում նորազարթ սերնդի հոգու վրայ:

Կարա-Մուրզան եղել է ոչ թէ միայն կապիւլմայստէր եւ դաշնաւորող, ապա նա զբաղուել է նաեւ երաժշտական գրականութեամբ: Նա բազմաթիւ յօդուածներ ունի գրած հայ եւ օտար երաժշտութեան եւ երաժիշտ — հեղինակների գործերի մասին, որոնցից ամենահետաքրքիրներն են «Վերդի» (Մուրճ, 1901 թ., էջ 174—282) եւ «Արեւելեան տարրը Եւրոպական երաժշտութեանը մէջ» (Մուրճ, 1901 թ., էջ 230—234):

Ինչպէս նրա ինքնուրոյն եւ դաշնաւորած երգերը, այնպէս էլ երաժշտական ուսումնասիրութիւնները գեղարուեստական արժէք չունեն: Ընդհանրապէս նա խորանալ չգիտէ եւ կարծես խուսափում է քննադատական լուրջ խօսք ասելուց: Պիտի ասել որ մեթոդը բացակայում է Կարա-Մուրզային: Բայց նա Կոմիտաս վարդապետից յետոյ այն բացառիկ երաժիշտներից է, որ զբաղուել է երաժշտական գրականութեամբ: Մեր մէջ այս ուղղութեամբ քչիրն են աշխատել: Եոր կուլտուրական կեանք սկսող մի ազգի մտաւոր կեանքում անշուշտ սա մի ահաւոր բաց է: «Թատրոն եւ երաժշտութիւն», թերթի խմբագիր Մայիլեանը եւ Գերմանիա երաժշտական կրթութիւն ստացող Սպիրիտոն Մելքեանը այս ասպարիզում մեծապէս աշխատել են: Անկասկած նպաստաւոր պայմաններում Կարա-Մուրզային պիտի

յաջողուէր լրջանալ եւ խորանալ «Առաջին յօդուածի մէջ նա մանրամասն կերպով կանգ է առնում Վերդիի կեանքի վրայ, համառօտակի կերպով ծանօթացնում է մեզ նրա օպերաների բովանդակութեան եւ ապա երկու խօսք ասում նրանց երաժշտական-գեղարուեստական արժէքի մասին: Երկրորդ աշխատութիւնը իմ կարծիքով աւելի հետաքրքիր է նախ որպէս թեմա եւ երկրորդ որ օտար լեզու չիմացող հայ ընթերցողը հնարաւորութիւն կ'ունենայ ծանօթանալու թէ ո՞ր Եւրոպացի երաժիշտները արեւելեան եղանակներ են մտցրել իրենց ստեղծագործութիւնների մէջ: Անհրաժեշտ եմ գտնում նրա այդ փոքրիկ աշխատանքից մէջ բերումներ անել:

«Մուզիկան բաժանում է երկու գլխաւոր տարրերի — Եւրոպականի, որ մշակուած է, եւ ասիականի որ գեռ մնում է իբրեւ հում նիւթ: Երաժշտութիւնը ինչպէս եւ գիտութիւնը ու արուեստը, ծագելով Ասիայում, անցնում եւ զարգանում է նախ Յունաստանում, յետոյ Իտալիայում, Սպանիայում եւ ապա տարածւում Եւրոպայի միւս մասերում:

Եւրոպական երաժշտութեան մէջ ասիական տարրը հետզհետէ մտնում է հետեւեալ պատճառներից զրգուած.

«. Հեղինակներին հետաքրքրում է ասիական երգը, իբրեւ արեւելեան նոր եղանակներ:

Բ. Երաժշտ. գեղարուեստը հարստացնելու համար հարկաւոր են արեւելեան եղանակները, իբրեւ հում նիւթեր:

Գ. Ասիացուն հարկաւոր է զարգացնել մշակելով նրա երգերը եւ իրան տալով եւ

Դ. Ճանապարհների լաւ հաղորդակցութիւնը արեւելքի մէջ մտցնելով Եւրոպական քաղաքակրթութիւնը, դիւրացնում է նաեւ արեւելեան երաժշտութեան մուտքը Եւրոպա:

Հետաքրքիր է որ արեւելեան երաժշտական տարրը մտցնելու փորձեր եղել են

դեռ սրանից 140—150 տարի առաջ եւ շարունակուած է մինչեւ այսօր:

Մոցարտը՝ Գերմանացի հանճարաւոր ստեղծագործ հեղինակը, որին Վիննայիցիք «երաժշտութեան թագաւոր» անունը տուին, 1760-ական թուականներին իր «Klavierstücke», երկերի մէջ գրել է «à la turca», պիէսը, որ մեծ համբաւ է ստացել այն ժամանակ, չնայելով որ այնքան էլ զուտ ասիական բնաւորութիւն չունի:

Վերդի՝ Իտալացի տաղանդաւոր հեղինակը գրել է 26 հատ օպերա եւ այժմս էլ է գրում: Յոգնելով իր Եւրոպական երաժշտութիւնից՝ 1860 թուին ճանապարհորդում է Հնդկաստան, Եգիպտոս, Արաբիա: Վերադառնալով գրում է արտաքոյ կարգի վսեմ «Aida», օպերան, մտչնելով նրա մէջ արեւելեան եղանակներ:

Ռուբինշտէյն՝ Ռուսաց վիթխարի երաժիշտը, հեղինակ, մանկավարժ, պիանիստ-վերտուօզ, գրել է անհամար պիէսներ, երգեր, երկեր եւ օպերաներ: «Թութակ», «Մակաբայեցիք», «Յերոն», «Դէմոն» օպերաները ունին ասիական եղանակներ:

Հիստը՝ Գերմանացի ամենահռչակաւոր պիանիստ-վերտուօզ եւ իմպրոզատոր հեղինակը հնչեցնում է իր «Ռապսոդիներում», հունգարական երգերի արեւելեան ճիւղերը:

Կարա-Մուրզայի մահով Հայ ժողովուրդը կորսնցրեց ոչ թէ միայն երաժիշտ-հեղինակը, այլ նաեւ երաժիշտ-քննադատը որը թէեւ չխորացան, էստետիկական հարցեր չջշտիեց բայց որը ճանապարհ հարթեց եւ առաջամարտիկը եղաւ այդ ասպարէզում:

(Շարունակել է)

ՌՈՒՐԵՆ ԹԵՐԼԷՄԷՋԵԱՆ



Մ Ա Տ Ե Ն Ա Խ Օ Ս Ա Կ Ա Ն

DOCUMENTS D'ART ARMÉNIENS. — De Arte Illustrandi-Collections diverses avec 36 figures et dessins dans le texte et hors texte et un Atlas de CIII planches. Notices et descriptions publiées et traduites par Frédéric Macler, Librairie Orientaliste Paul Geuthner, Paris 1924, 4°, էջք 68, տխտ. CIII, գին Քր. 250.

Գերագանցապէս հայասէր եւ անխնջ վաստակաւոր Մակէր՝ իր բազմաթիւ երկերու շարքը կը ճոխացնէ գօհարով մը՝ ձօնուած «Անմահ Հայաստանի»: Գեղագիտական պահանջներու լիով յագուրդ տուող գողտրիկ երկու հատորներ են, որոնք կը ղիտեն հայ նկարչական արուեստի բեկորներ ապահովել յառաջ քան անհետ կորսուիլը՝ նման հազարաւորներու... (texte, 7):

Յառաջաբանի մը մէջ (7—9) կ'անդրադառնայ հայ խորանշարդերու եւ լուսանցազարդերու գծագրական նրբութեան, գոյներու ճոխութեան, որոնց իրը նմոյշ կը ներկայացնէ գունատիպ խորանշարդեր (fig. 1—3), Նոյնքան խնամուած արուեստ մը կը տեսնուի հայ խաչքարերու (էջ 8, պտկ. 4—5), երաժշտական խաղերու վրայ (պտկ. 6): Հայ ձեռագիրներու փառակազմ կողմ ալ իր արծաթեայ դրօշուածքով արուեստագէտներու վարմանքը կը խլէ (էջ 8 եւ 64. հմմտ. տխտ. CII, CIII): Վերջապէս ղիտել կու տայ Մակէր, որ Հայերը պատկերազարդած են մեծ ժողովրդականութիւն վայելող պատմական ամբողջ գրուածքներ, այսպէս կալիթենէսի «Վարք Աղեքսանդրի» (պտկ. 7abc—8abc):

Յառաջաբանին կը յաջորդեն բնագիրներ նկարազարդելու արուեստի մասին հայ հին գրուածքներ թարգմանուած, նախ՝ Վասն Կարուածներ թարգմանուած, (էջ 13—16), որուն հայ ղաշի գրուածքը (էջ 130—132, բնագիրը հրտ. Անահիտ, 1911, 130—132, եւ որ հանուած է ԺԶ. դարու ձեռագրի մը: — Երկրորդ (էջ 17—23) թարգմանութիւն չԱ. 1895, 87, 316, 370 հրատարակուած կտորներու, որոնք կը խօսին գոյներու բաղադրութեան մասին: — Երրորդ (էջ 25—35) կ'ամփոփէ Ալիշանի յօդուածաշարքը՝ ԲԶԳ. 1896, 289, 348, 385, 446, որու նիւթը կը կազմեն վենետիկեան թանկարժէք բայց դժբախտաբար թերի ԺԶ. դարու ձեռագրի մը նկարագրու: